ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
էլ. փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6 47 22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով՝ որոշում եմ.

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման և անցկացման համար ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տարածքում սահմանել երկու տեղամասային կենտրոն՝
   1) Մ. Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող «Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում: Տեղամասային կենտրոնում քվեարկությունը պատշաճ ձևով կազմակերպելու և անցկացնելու պատասխանատվությունը դնել տնօրեն Նաիրա Սվարյանի վրա:
   2) Կոմիտաս փողոցի 17/1 հասցեում գտնվող նախկին կենցաղի տան շենքում: Տեղամասային կենտրոնում քվեարկությունը պատշաճ ձևով կազմակերպելու և անցկացնելու պատասխանատվությունը դնել Հակոբ Միքայելյանի վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, փետրվարի 10
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի համար ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր՝
   1) Տ. Անդրեասյան փողոցի թիվ 11՝ հասցեում գտնվող շինության պատին՝ ընդհանուր տրամադրվող չափը՝ 8 քմ,
   2) Անի թաղամասի 1-ին շենքի պատին՝ ընդհանուր տրամադրվող չափը՝ 10 քմ,
   3) Մ. Բաղրամյան 30 հասցեում գտնվող ավտոտնակի դարպասին՝ տրամադրվող չափը՝ 4 քմ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, փետրվարի 10
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաոլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 6

ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, հաշվի առնելով Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում այլ դահլիճների բացակայությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում հանրաքվեի քարոզչություն կատարողներին ժողովներ, հանդիպումներ, միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով օգտագործելու համար տրամադրել Մուսալեռ համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող «Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միջոցառումների դահլիճը (100 նստատեղ):
2. Սույն որոշման առաջին կետում նշված միջոցառումները իրականացնելու համար թույլատրել տրամադրելու շինությունը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 18:00-21:00:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, փետրվարի 10
գ. Մուսալեռ